«ՊԱՏՄԱ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ»

խմբագրության

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը ողջունում է «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությանը հանդեսի հրատարակության 30-ամյակի առթիվ:

Անցած երեք տասնամյակների ընթացքում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Հանդեսը» իր շուրջն է համախմբել Սովետական Միության և արտասահմանյան առաջավոր շատ հայագետների, արդյունավետ աշխատանք է կատարել հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, արվեստի, փիլիսոփայության և մշակույթի այլ բնագավառների կարևոր հարցերի ուսումնասիրության, արևելագիտության, կովկասագիտության, պատմագիտության ու բանասիրության տեսական մի շարք պրոբլեմների գիտական քննարկման, հարևան երկրների հետ Հայաստանի ունեցած տնտեսական, քաղաքական ու մշակութային կապերի ու փոխհարաբերությունների պատմության մեկնաբանման, սփյուռքահայ գիտական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի լուսաբանման ուղղությամբ:

Մշտապես բարձր մակարդակի ձգտող «Հանդեսը» դարձել է հայագիտական ծանրակշիռ գիտական օրգան և համընդհանուր ճանաչում է ձեռք բերել մեր երկրում և նրա սահմաններից դուրս:

ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը նշում է նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի 30-ամյա արգասավոր գործունեությունը «Հանդեսի» անընդմեջ գլխավոր խմբագրի պաշտոնում:

Հայկական ՍՍՀ ԳԱ պրեզիդենտ,
ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1987 թ., դեկտեմբերի 28